

անդամներն իրենց անհատական և ընտանեկան կյանքի մասին էլ հոգ տանել, թեկուզ մի մասն էլ հենց իրանց աշխատանքների հաշվով:

Առհի թե կենսական պայմանները կատարյալ և անհատական է այդ մասնադ սերնդի համար, առհի թե ինչ կորստաբեր հետևանքների կարող է լինել մասնակիցների այդպիսի մոռացված, անխնամ դրությունը: Բայց դա կրկնողություն չի լինի միամիտ ձևացող տուգանքի համար, նրանք չեն հասկանում:

Ուլ պետք է պաշտպան հանդիսանայ դրանց—այդ հարցն ենք դնում Բագուի հասարակության համար, առհի թե միակողմանի և անարդարությունների տարեկան սովորական նիստերը: Անհատական հեղինակությունը մի քանի կաթիլ զոնե թափվելն իրանց համար աշխատող այդ փոքրիկների համար, որոնց վիճակը այդքան ցածր է:

Ռ. Յովհաննյան

ՆԱԽԱԿ ԿԻՆՎԻՑ

Մարտի 23-ին

Այստեղ կայ Առևտրական կրթություն տալու ժամը կողմից մի ընկերություն, որ նպատակ է դրել յատկապես ժողովրդի հասարակ դասակարգի մեջ տարածել առևտրական կրթություն: Նա օրինակելի եղանակով առաջ է տանում գործը և ձեռնարկում այնպիսի միջոցների, որոնք իրանց տեսակով նոյն-իսկ առաջինն են համարվում արդյոք Ռուսաստանի մեջ:

Դեռ անցեալ տարի նա հիմնեց հասակաւոր անձանց համար առևտրական կուրսեր, որոնք, իրանց մատչելի և զբաղող բոլոր յարմարություններն չնորհի, հենց սկզբից գրաւեցին ունեւորներին մի ստուար խումբ: Առաջին տարին դրանց թիւը հասնում էր 200-ի, իսկ այժմ աւել է նոյն-իսկ 300-ից: Ունեւորներին մօտ քառորդ մասը անցնում է ուսման ամբողջ դասընթացը, իսկ մնացած մեծ մասը յաճախում է միայն իր համար որոշած, աւելի հետաքրքիր առարկաների դասերին: Դասաւորության ծրագիրը մօտաւորապէս հետևեալն է. կօն, անհատական և շաքաթական մի ժամ, բացառապէս կիրակի օրերը, ուսուցող լեզու՝ շաքաթական 2 ժամ աւագ բաժնին և 3 ժամ երկու ստորին բաժիններին, որոնք յաճախում են միայն առաջին տարին (բոլոր ունեւորներն էլ բաժանումները մեջ են սովորում): Գերմաներէն՝ աւանդում է շաքաթական 3 ժամ: Թուրքերէն՝ 3 ժամ: Վալիշաքերէն՝ 4 ժամ—կիրակի օրերը, և շաքաթական ժամը 4 ժամ աւագ բաժնին և 3 ժամ մնացած երկու բաժանումները: Պարապետները տեղի է ունենում երկու-ները 9—11 ժամին, և կիրակի օրերը ցերեկով: Վճարը՝ կիսամեայ ամբողջ կուրսի համար նշանակված է 7 ռ. 50 կօպ., իսկ իւրաքանչիւր աւարկայի համար՝ 1 ռ.—2, 50 կօպ.: Կրօնագիտությունը անանկում է ձրի: Վերջին օրերս մտքովն նոյնպէս ֆրանսերէն լեզուն: Անհատները զանազան դասակարգերից են, այն է վաճառականներ, առևտրական գործակալներ, խոշոր ու մանր խանութպաններ, արհեստավորներ, արհեստ սովորող աշակերտներ, գրաւորներ և մեծ թւով տնային կրթություն ստացած այնպիսի երիտասարդներ, որոնք դեռ չեն մտած ինքնուրույն կենսի մեջ և չունեն որոշած որևէ պարագմունք: Տարօրինակ են նոյնպէս դրանց հասակները. 14—15 տարեկան պատանիների հետ խառն են և 30—40 տարեկան յաղթանկաւ, միութեամբ մարդիկ:

Արդիսի օգուտ կարող էր բերել և Կովկասում այդպիսի կուրսերի երևան գալը, ուր հազարաւոր երիտասարդներ, մասնաւորապէս տաճարների աշխատանքների՝ ունեցած ազատ բազմաթիւն էլ անց են կացնում կամ ընկած խոնաւ նկուղներում, կամ անմիտ ժամաւաճառութեամբ: Մեր խօսքը գաւառական այն շրջաններին է, որոնք իրանց անհատական և անբարոյական երկրորդական դուրս ոչինչ չեն տեսնում, այլ այն դժբախտ, կենսի խորթ զաւակները մասին, որոնք մի կտոր հացի համար հազարաւոր վերատեսեր եկած թափառում են նախապէս հորերի շուրջը...

Վերջինիս ընկերությունը վերջին համակրելի ձեռնարկությունը՝ նոր բացած իրական առևտրական ուսումնարանն է, որ արդէն գրաւել է բաւական թւով աշակերտութիւնների բազմութիւն: Այդ ուսումնարանն իր տեսակով անդրադարձնում է համարվում ամբողջ Ռուսաստանում:

Վ. Մանուկեան

ՆԱԽԱԿ ԳՈՐԻՑ

Մարտի 27-ին

Երեկ, ուրբաթ, մարտի 26-ը, նշանաւոր օր կարելի է համարել Ղուբայի համար: Այգեղործական դպրոցը բացվեց և օժիւց: Առաւօտուանից դպրոցը զարդարված էր դրօշակներով, հրաւիրված էին քաղաքիս պաշտօնեաները և մասնաւոր մարդիկ: Ռուս հոգևորականութիւնը մաղթանք կատարեց: Ներկայ էին բոլոր դպրոցների աշակերտները, այն է՝ ուսուցող քաղաքային, հայոց և այգեղործական դպրոցների աշակերտները: Մաղթանքից առաջ ուսուցչական Վ. Ի. Գորոզցիին մի գեղեցիկ և ազդու ճառ խօսեց, բացատրելով, թէ որքան կարևոր նշանակություն ունի այգեղործական դպրոցի հիմնարկությունը: Բացառապէս մի այնպիսի հարուստ և առաւել տեղում՝ որպիսին է Ղուբայի, որը վաղուց անուշադիր և աչքաթող էր եղած, բայց չնորհի: Բագուի նահանգապետի նախաձեռնութեան բացվում է դպրոցը:

Մաղթանքից յետոյ խօսեց այգեղործական դպրոցի հոգաբարձու, հայտարար միջնորդ Յ. Ա. Դեմիրճիյան: Նա ասաց մօտաւորապէս հետեւեալը. «Բագուի նահանգապետ Բոգդէ 1897 թուին լինելով Ղուբայում և հաւանելով այստեղի ընտելութիւնը՝ գրաւոր զեկուցում արեց երկրագործական միջնորդին, ինչպէս իրանց, որ այգեղործական դպրոց բացվի Ղուբայում: Միջնորդը ներկայացրեց և զեկուցումը Թագաւոր Կայսրին, որը բարեհաճել է ստորագրել «Խ ի ս տ ց ա ն կ ա լ ի է»: Այնուհետև սկսվում է շինութիւնը. կանոնադրութիւնը հաստատում է միջնորդը 1898 թվի հոկտեմբերի 2-ին:

Այգեղործական դպրոցը երկրորդ կարգի է, երկու դասարաններով (չորս սենեակ է յատկացրած այդ դասարաններին) և երեք տարվայ դասընթացով: Աշակերտներին թիւը վաթսուհինգ չէ պիտի անցնի, դասաւորութիւնը ձրի է. ընդունվում են ամեն ազգից աշակերտներ: Ուսման վճարն է՝ գիշերօթիկների համար 80 ռ. տարեկան, կիսաօթիկների համար 40 ռուբլի: Աշակերտներ ընդունվում են 12 տարեկանից ոչ փոքր և 14 տարեկանից ոչ մեծ: Միայնակի համար հետեւեալ աղբիւրներին են փողեր ստացվելու. նախ՝ դամաւարանից տարեկան 2500 ռ. և տեղական եկամուտներից (доходы съ земского налога) տարեկան 1814 ռ., և մասնաւոր նուէրներից: Առաջիկա ընդունված են 30 աշակերտ, որոնցից 2-ը՝ ուսուցչական, 4-ը՝ հայ, մնացած թուրքեր են: Հրաւիրված են երեք ուսուցչներ: Հայահասակներ, բանջարեղենների, ծաղիկների սերմեր են բերել տուել, որ դրված էին իր ցոյց հասարակութեան մի սենեակում: Պէտք է շինվի օւղանմէրէյի Բացվելու մասին երեկ հետազոտելու օւղարկվեցին երկրագործական միջնորդին և Բագուի նահանգապետին: Փողովորդը գոհ և ուրախ սրտով ցրվեց:

Մ. Ս.

ՆԱԽԱԿ ԳՈՐԻՑ

Մարտի 22-ին

Ամսիս 16-ին այստեղի հայտարար դատաւորի մօտ ընկնում էր մի վերին աստիճանի տխուր գործ: Մեղադրվում էր Գորու հոգևոր կառավարության անդամ Ուփիս-Յիւն գիւղի ծխատէր Յակօբ քահանայ Գուլեանցը վաշխառութեան մեջ: Փահանայի ծխակահնները երկուսը, Վանո և Արտեմ Սարգսեան Յակօբեանները, փաթկված ցնցոտիներով մեջ, եկել էին դատարան և ասում էին, թէ հինգ ննջեցեալ թաղելու համար քահանայ Գուլեանցը առել է իրանցից 50 ռուբլու մուրհակ և իւրաքանչիւր վեց ամիս փոխելով մուրհակը՝ բարդել է վրան 24%: Երեք տարվայ ընթացքում քահանայ Գուլեանցը ստացել է չորս օրավար հողի ցորենն ու գարին, մօտաւորապէս 50—70 կօղ կամ 250 պօղ, և այժմ էլ ի պահանջում է 12 ռ. 40 կօպէկ և սպաւնում է, որ եթէ չը տան, նրանց ունեցածը աճուրդի պիտի հանէ: Պարտապանները վերջին շնչին հասնելով, արդարադատութեան ետեղ ընկած, վկաներով, որոնք ամենքն էլ հայր Գուլեանցի ծխակահններից են՝ դիմել էին օրէնքի պաշտպանութեան:

Վկայ Գարսո Տէրէրաշվիլին ցոյց տուեց, որ ինքը, տառնուէր եղած ծածանակ, տէր հօր մուրհակները միշտ վաւերացրել է, հաշուով 24% իսկ Յակօբեանները ննջեցեալների թաղման համար կանխիկ փող չունենալու և սատակ աղքատութեան պատճառով մուրհակներ էին տալիս 24%: և այդպէս ամբողջ գիւղը պարտ է տէրէրներին: Վկայ Գարս Սրբիւրեզով նոյնը կրկնեց, աւելացնելով որ ինքն էլ կարելի ունեցած ծածանակ 20 տոկոսով վերցրել է շատ անգամ փող: Հայտարար դատաւորի հարցմանը, թէ Յա-

կօբեանները մուրհակ տալիս ներկայ էին վերականր, նրանք պատասխանեցին, որ թէ և ներկայ չեն եղել և չեն տեսել մուրհակ առնելիս, բայց իրեն հարեաններ՝ այդ բանը գիտեն: Պարտապան գիւղացիներին պակասում էին փաստեր, և նրանք չէին կարողանում պարզ պատկերացնել իրանց չարատանջ վիճակը, մինչդեռ հայր Գուլեանցին պաշտպանում էր փաստաբան Կորունթեան:

Հայտարար դատաւորը բաւականապէս փաստեր չունենալով՝ արդարացից հայր Գուլեանցին պարտապանները այդ վճուրղ դժգոհ են մնացել կարծեմ, և գործը պիտի շարունակեն նահանգական դատարանում:

Գուլե և Գուլեանց քահանան մեղ չունի այս դէպքում, բայց փաստը փաստ է մնում. գիւղացիները պարտական են իրանց քահանային և վերջինս դատաւարանական պրիստաներին միջնորդ է գործ տեսնում իր ծխակահնների հետ: Սա աւելի քան մի անգամակն երևոյթ է: Քահանայի կողմը գլխովին, եղբայրութիւնը քարոզել է և ոչ թէ պարտը տալը և վէճի բռնկելը: Եթէ Գուլեանց քահանայի փող ունի, աւելի լաւ չէր անի, եթէ դնէր փող բանկում, իսկ իր ժողովրդի հետ ապրէր իրեն հովու: Չենք կարծում, որ մուրհակով փող տուողը հովուի նմանութիւն ունենայ:

Գորեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆԻ

Յիշեցնում ենք, որ այսօր, հինգշաբթի, ապրիլի 1-ին, նշանակված է Կովկասեան Բարեգործական ընկերությունն ընդհանուր ժողովը, որ պէտք է ընէ կառավարություն կողմից առաջարկված ընկերության կանոնադրությունն նոր ծրագրով:

Պարիզի «Nord» լրագրին Պետերբուրգից հեռագրում են. «Պապի ներկայացուցիչը, ինչպէս յայտնի է, չը պէտք է մասնակցի խաղաղութեան կօնֆերենցիային ձայնի իրաւունքով: Սակայն հարաւոր է, որ պապի դեսպանին թող կը արվի ներկայ լինել նիստերին և խորհուրդներ տալ:

Մեղ հաղորդում են, որ ներկայ ապրիլի վերջին թիֆլիսում տեղի կունենայ աշուտադրած տեսակի ձիերի ցուցահանդէս: Թէ ձիերի և թէ մի տարեկան ընտանեկանի համար նշանակված են պարզները: Ցուցահանդէսի միջոցին կը կայանայ նաև ձիարշաւ: Թիֆլիսի ձիարշաւական ընկերությունը, որ պէտք է ղեկավարէ ցուցահանդէսի և ձիարշաւի գործը՝ կը նշանակէ յատուկ նիստեր՝ ընտրելու յանձնաժողովներ ձիերի արժանաւորութիւնը գնահատելու համար:

Արեւելեան օրացոյցի բարեփոխելու խնդիրը մի քանի անգամ հրապարակ է եկել և դարձեալ յետաձգվել: Այս անգամ նորից յարուցել է նոյն խնդիրը ուսուցիչ աստղագիտական ընկերություն խորհուրդը, որ մտադիր է իր առաջարկը լաւ ժաշկելու համար հրաւիրել իր ժողովներին զանազան հաստատությունների ներկայացուցիչներին: Յինանները միջնորդութիւնը իր կողմից ներկայացուցիչ նշանակել է յայտնի ընկերու Գ. Մեդեդեանին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆԻ մեղ գրում են մարտի 19-ից. «Այսօր երևանի նահանգական դատարանի քննական բաժնում ընկնել մի գործ, որ երկու տարի է՝ տեղիս հասարակութեան ընդհանուր խօսակցութեան առարկայ է դարձել: Երևանում տարիներ առաջ գոյութիւն ունէր մի գրասենեակ, ուր տոկոսով փող էին տալիս: Գրասենեակը պատկանում էր Գորանեանցիներին: Երկու տարի առաջ իմացվեց, որ հակառակ օրէնքի՝ գրասենեակը անգին տոկոսներ է վերցնում: Գործը ընկնի մօտից անցաւ դատարան: Մեղադրվածներին նստարանի վրա նստած էր Հ. Գորանեանցը. կանչված էին 60-ից աւելի վկաներ: Երկու օր գործը քննելուց յետոյ՝ դատարանը դատաւարտեց Գորանեանցին վաշխառութեան համար՝ զրկել բոլոր իրաւունքներից և տաս տարի մասնակցելով արքայի Աստրախանի նահանգը: Սա մի նշանաւոր երևոյթ է մեր քաղաքի համար: Գործը բարձր դատարանի խիստ վճիռը անհաշտեց և ուշքի բերեց տեղիս բազմաթիւ կեղեքիչներին, որոնք առատ հունձ են հնձում այստեղ:

ՄԻՄՏԵՐՈՂՈՒՄ մեղ գրում են. «Այս տարի էլ, ըստ սովորութեան, տեղիս հայոց դպրոցի դասընթացն ընտանեկան պարբերական կայացան: Այս տարվայ պարբերականները, համեմատելով անցեալ տարիների հետ, շատ կենդանի

անցան: Պարբերականներն բաւական ստուար բազմութիւն էր լինում: Միայն մուտքից դուրս գալով՝ ըստ արդիւնքը դպրոցի օգտին 600 ռուբլուց անց է: Առանձին չնորհակալութեան արժանի են պարբերականների կարգադրիչները՝ պ. պ. Յովհաննէս Սեփեան և Յարութիւն Բուռնազեան, որոնք ոչ մի ջանք չը խնայեցին պարբերականների աջողութեան համար:

ՓՕԹԻՑ մեղ գրում են. «Անցեալ ամսին այստեղ խորասուզված երկու նաւերն էլ ազատվեցին երկու փոքրիկ փրկարար նաւերի օգնութեամբ: Նաւերը չէին վնասվել, փրկարար նաւերը ուղարկված էին ապահովագրական ընկերություն կողմից:

ՄԵՐՎԻՑ մեղ գրում են մարտի 15-ից. «Մի շաբաթից աւել է, որ պօստ չէ ստացվում Մերվում: հաղորդակցութիւնը կտրված է Կրասնօ-Վոդսկի հետ: Երկար չոր եղանակներից յետոյ, փետրվարի վերջերից սկսած յորդ անձրևներ են տեղում, իսկ ամսին 12-ին այնպիսի սաստիկ անձրև եկաւ, որ քաղաքը լճի էր նմանվում: Մերվ և Կախկա կայարանների մէջ ոչնչացել էր մի մեծ կամուրջ, իսկ Մերվից ճանապարհված ապրանքատար դնացքը առաւօտեան ժամի 4-ին խորտակվեց, վերջինիս կամուրջի մէջ խրվելով: Սպանվել են մեծեամբար, իր օգնականը և օրեր-կօնուկաօրը:

ԴԵՐԲԵՆՏԻՑ մեղ գրում են հետեւեալ մարտի 25-ից. «Մեր երեցփոխի հաշիւները կատարեալ պատուհան են դառել թէ ժողովրդի և թէ իր, պ. Բուռնաթեանի գլխին: Դեռ 1897 թուին հաշիւը ամբողջ մի տարի Դերբենտի փողոցները չափ-չիւրուց յետոյ, դարձեալ հասարակութեան կողմից մնաց անվաւեր: Զը նայելով քահանայ Սպանտունեանին՝ եւսանդուն աշխատութեանը ու անվերջ հրաւերներին՝ հասարակութիւնը մնաց հաստատ իր որոշումի մէջ: Վերջապէս մեր կօնսիտօրիան բարեհաճեց ուղարկել Խ. քահանայ Փանեանցին՝ յատկապէս այդ հաշիւները ընկելու և հասարակութեան դժգոհութեան պատճառները լծանալու համար: Հայր Փանեանցի հրաւիրած ժողովում, հասարակութիւնը բոլորովին պարզ կերպով յայտնեց իր տրամադրութիւնը հետեւեալ խօսքերով. «Մենք ոչինչ չունենք երեցփոխ պ. Բուռնաթեանի դէմ, բայց և այնպէս ցանկանում ենք, որ եկեղեցական ազատ դուռները անպատճառ դրվեն պետական գանձարանում: Այս ժողովի մանրամասն արձանագրութիւնը քահանայ Փանեանց խոստացաւ ուղարկել թեմական կօնսիտօրիային, բայց, ինչպէս երևում է՝ հենց այնտեղ էլ ամիստարակութիւն եղաւ, որովհետև մինչև հիմայ մեղ յայտնի էր, որ պ. Բուռնաթեանցը հասարակութեան պահանջին կատարում տուած լինի. գոնէ ինքը այդ մասին չէ յայտնել ի գիտութիւն հասարակութեան: Այս այսպէս լինելուց յետոյ՝ մեր թեմական կօնսիտօրիան դարձեալ հրամաններ է գրում գործակալին, որ ժողով գումարէ ու հաշիւները ընէ: Կարճ միջոցում Սպանտունեանց քահանան մի երեք ազդու հրաւերներ գրեց, բայց պատահաւորապէս մի ազդու խօսքը ոչ որ չէր լսում: Մարդ մնում է միանգամայն զարմացած, թէ ինչ են ուղում այդ մարդիկ: Հասարակութեան այդքան պարզ պահանջին զոհացում չը տալուց յետոյ էլ ինչ միտք ունեն ժողովները: Զը լինի ուղում են գրել՝ Վասն բացակայութեան հասարակութեան, հաշիւը համարին վաւերական» ու դրանով էլ վերջ տան խնդրին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՆԻ

—Հոռոմից լրագրիներին հեռագրում են, որ պապի մահը սպասվում է օրէցօր: Ռուսաստանը զիտաւորութիւն ունի եւսանդով պաշտպանել Րամպօլայի թեմականութիւնը:

—Բերլինից «Hochzeit» լրագրին հեռագրում են, որ գերմանական Վիլհելմ II կայսրը աշնանը կայցելէ խնդիրին Կահիրէում:

—«Temps» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը գրում է. «Օրվայ հարցը պատրիարքի ընտրութիւնն է Անտոնի Երմոլի համար, որը մի տարի արդէն թափուր է: Այդ հարցը վերին աստիճանի գրգռում է Կ. Պօլսի յոյն կղերի կրքերը, որը դիպլոմատիայի օգնութեանն է դիմում օրտօգօքս ուսն եկեղեցու գործունէութեան դէմ: Ռուսաստանը գործում է, այն-ինչ ուրիշները միայն բողոքում են: Ռուսաց եկեղեցին ցանկանում է Նրուսաղէմի աթոռի վրա ունենալ ուսն պատրիարք և երկրորդական դերի մէջ դնել Ծառարի պատրիարքին: Այս նպատակին հասնելու համար Ռուսաստանը աստիճանաբար է գործում և Նրուսաղէմ հասնելուց առաջ՝ կամե-

նում է գրանել Անտիպի ամրոցը: Եւ Ռուսաց եկեղեցին անդրադարձան ճանապարհի վրա է: Թուրքիայում ապրող յունաց հայտաբերի զորութիւնը օրէց օր վատթարանում է, որովհետեւ Ք. Գուրը չէ կամենում ընդունել յունաց հայտաբերի լիազօրութիւնները, այն պատճառով, որ հիւպատոսական պայմանագրերն են զեռու կապված չեն: Յունահայտաբերի զատի ենթարկելը և բանտարկելը շարունակվում է ամբողջ երկրում այնպէս, որպէս թէ այդ յոյները թիրաքահայտաբեր լինելին: Խիստ կղզու վրա այդ հալածանքները այնպիսի չափեր ընդունեցին, որ տեղական յունաց հիւպատոսը յաճախակի խնդրում էր յետ կանչել իրան, որովհետեւ իր ներկայութիւնը ոչինչ օգուտ չէ բերում իր հայրենակիցներին: Խիստից մի պատգամաւորութիւն եկաւ Աթէնք, խնդրելու արտաքին գործերի մինիստրին, որ նա պահանջէ թիրաքահայ յունաց հիւպատոսներ լիազօրութիւնները ճանաչել, կամ թէ յոյն հայտաբերի իրաւունքները պաշտպանութիւնը յանձնէ մեծ պետութիւնների հիւպատոսներին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

30 մարտի

ՊԱՐԻՋ: «Figaro» լրագրում հրատարակված են Գալիֆէի, Կալմար-Պէրէի, Լարոշի, Պէրէ-Պէ, Լոնկէտտի և Գաւառարի ցուցմունքները: Գալիֆէ ասաց, որ Եւրոպայի յարաբերութիւնները օտար պետութեան ատուաշենքի հետ յայտնի էին ամենքին: Նա տալիս էր նրանց ցանկացած ամեն տեսակ տեղեկութիւնները: Կալմար Պէրէ խօսեց առաջ կոմս Միւսսոնի այցելութեան մասին: 1895 թ. յունվարի 9-ին, Միւսսոնը, Հոֆէնշտէյն ստացված հեռագրի հիման վրա, պահանջում էր, որ հերթին այն տեղեկութիւնները թէ գերմանական դեսպանութիւնը խառն էր Իրէյֆուսի գործում: Պէրէ պատասխանեց, որ չէ կարող յիշել պատասխանատուութիւն յանձն առնել, բայց որովհետեւ հեռագրերը նրա, որպէս մասնաւոր մարդու աղետութեան էր դիմում, նա ասեց Միւսսոնին, որ գերմանական դեսպանութեան մէջ գտնվեց ղեկավար, որը կառավարութիւնը անհաշիւ է համարում, բայց խառնում է գործի մէջ գերմանական դեսպանութիւնը: Բաւական է, սակայն, գտնել օտար դեսպանութեան մէջ դոկտրինա, ըստ երեւոյթի, ստացված ֆրանսիական օֆիցերից՝ որպէս զի այդ օֆիցերը մեղադարձնում էր Միւսսոնի պահանջը: Պէրէից կտրական հերքումն և նկատեց, որ հերքումը չը պէտք է վերաբերվի միմայն գերմանական դեսպանութեան: Մի քանի օրից յետոյ ինքիդէստը վերադառաւ Գերմանիայ Մերսիէ ասաց վկային, որ ղեկավարը ներկայացրված է եղել ղեկավարական դատարանին, բայց նա չէ հասկացել, որ հաղորդագրութիւնը պէտք է սահմանափակվի միայն դատաւորներով: Վկան իմացաւ այն նամակների մասին, որոնք վերաբերվում էին Վիլհելմ կայսրին՝ միայն Պառլամենտի հարցապնդումից: Միւս ցուցմունքները մեծ նշանակութիւն չունեն: Լարոշ ասաց, թէ նա ծովապետ Իրապերիէյից իմացել էր, որ իբր թէ էրցհերցոգ Վիկտոր հաւատարմութիւն է եղել, թէ գերմանական կառավարութիւնը երբէք յարաբերութիւն չէ ունեցել Իրէյֆուսի հետ:

ՇԵՐԲՈՒՐԳ: Հիւսիսային իտալական մի քանի կրթութիւնների կատարելուց յետոյ հասաւ այստեղ: Լոկուան, որ գտնվում էր «Formidables» մարտանավ վրա՝ որ իջաւ, որպէս զի վրանարանը դիտէ: Ռուսաց «Первогъ Эднѣнскій» զրահակիր ֆրանսիական զրօշակ բարձրացրեց և մինիստրին ողջունեց 21 թիւանօթմանքութեամբ: Ռուսաց բոլոր երեք նաւերի նաւաստիները աղաղակներով ողջունեցին նրան: «Formidables»-ը ողջոյնի ցոյցներն պատասխանեց և ռուսաց զրօշակ բարձրացրեց:

ԲԵՐԼԻՆ: Երէկվայ ներկայացուած վերջնական յետոյ Վիլհելմ կայսրը տիկ. Սաւինային և Ստաւինսկային իր օթեանը հրաւիրեց, նրանց հետ խօսեց և պարգևներ տուեց:

ՀՌՕՄ: Կառավարութիւնը ընդունեց Հաագայի կոնֆերանսիային մասնակցելու հրաւերը:

ՏԵՏԻՆԻԷ: Չերնօգորիան ռուս պատուիրակներին յանձնարարեց՝ իր ներկայացուցիչները լինել:

31 մարտի

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Ի նկատ առնելով «Сынъ Отечества» լրագրի փնտաւար ուղղութիւնը, որ առանձին խտուրթեմք արտայայտեց Վանանց հարցը՝ յօդուածով № 84-ում ներքին գործերի մինիստրը օրոշեց. «Сынъ Отечества» լրագրին յայտարարել առաջին նախադրուշութիւն:

ՌՈՒՍԱՐԻՍ: Ստուրման թագաւորին յանձնեց կարիէտի հրաժարականի խնդիրը: Թագաւորը խնդրեց մինիստրներին իրանց գործերը կառավարել՝ մինչև նոր կարիէտի ընտրութիւնը:

ՊԱՐԻՋ: «Հաւաստի գործակալութիւնը» հերքում է մի քանի լրագրիչների հաղորդած լուրերը թէ «Ֆիգարո» լրագրի խմբագրութիւնը ընդունութեան գործը ստացել է Դէլկասսէից: Քըն-նութեան գործի երկու հատորները, որոնք ուղարկված էին Դէլկասսէին՝ նա իսկոյն յանձնեց պահելու քաղաքական դեպարտամենտում, այն էլ այնպիսի պայմաններում, որոնք անկարելի են դարձնում որեւէ անհամատեղութիւն:

ԼՕՆԻՍՈՆ: Պատգամաւորների ժողովը Մակլին հարցնում է, թէ հարաւոր չէ արդեօք, մինչ հնդկական և միջին Ասիայի երկաթուղիների ծայրերի կայարանները միայն մի քանի հարկեր անդրակաւն մղոն հեռավորութիւն կունենան միմեանցից, երբ նախադրված երկաթուղին Օրէնդորգից մինչև Սամարադան չինվի՝ հաստատել երկաթուղային ուղիղ հաղորդակցութիւն Կալէից մինչև Կալիֆուտտա առանց ընդհատութեան: Բալֆուր պատասխանում է, թէ այդ հարցը պէտք է քննել աւելի լայն հիմքեր վրա՝ քան ունեցել է հետոքը: Ինքը հարաւորութիւն չունի տեղեկութիւն տալու այն քաղաքականութեան մասին, որ ունի կառավարութիւնն այս գործում:

ՊԱՐԻՋ: Հերթում է այն լուրը, թէ Նաւատորմի շտաբի գլխաւորը, ծովապետ Կիւլբերկը հրաժարական է տուել:

ԼՕՆԻՍՈՆ: Պատգամաւորների ժողովը Բրօքլին յայտնում է, թէ Օ'Կոնօրից ստացվել է զեկուցում, թէ Գուրը, մի քանի անգամ նորան ուղղված առաջարկութիւնների պատճառով, հրաժարել է տեղական իշխանութիւններին՝ նորից բանալ հայկական որբանոցները Բալուտում, Կիուկուսպում (?), Դիարբէքլում: Ձէյթունի որբանոցը փակված չէ եղել: Գուրը վստահացրել է, թէ միւս որբանոցներին նա ձեռք չի տալ: Հայ փախտականներին Ռուսաստանից քշելու գործի մասին կառավարութիւնը տեղեկացաւ, թէ առայժմ ոչ մի նոր միջոց ձեռք չկրի տալու: Եստիպարար նրանց հայրենիք վերադարձնելու մասին, և որ ռուսաց կառավարութիւնը բանակցութիւններ է անում թիրաքաց կառավարութեան հետ այն մասին, որ փախտականներին, Թուրքիա վերադառնալու ժամանակ, երաշխաւորված լինի կատարել ապահովութիւն:

ՀՌՕՄ: Այսօր տեղի ունեցած կարգիմանքների ընդունելութեան ժամանակ պապը ճառ արտասանեց, որի մէջ նախ գոնութիւն յայտնեց Աստուծո՛ւ իրան առողջութիւնը վերադարձնելուն համար, ապա դիմեց Ռուսաց Կայսրի առաջարկութեան՝ ապառաղիւնները կրճատելու մասին: Պապը ասաց, թէ ինքը ուրախութեամբ ողջունում է այս սկզբնաւորութիւնը և մաղթում է, որ այս մեծահոգի ցանկութիւնը լիառատ պտուղներ բերէ ամբողջ աշխարհին: Սկեզիցին ոչ մի քան այնպէս բուռն կերպով չէ ցանկանում ինչպէս կատարել իր կոչումը: Եկեղեցին, իբրև իշխանի արկունքութեան, իբրև խաղաղարար, ոչ միայն խղճի դաւառում, այլ հասարակական գործերում որչափ որ թոյլ են տուել նրա գործունէութեան սահմանները՝ մասնակից է եղել պատմական բոլոր կարեւոր համալսարանային գործերին և այս կերպով մարդկութեան ժառանգել է կալան ծառայութիւններ: Առանց պապերի հեղինակութեան՝ քաղաքակրթութիւնը ոչնչացած կը լինէր: Վերջը պապը ասաց, թէ ճիշտը տեղ-տեղ կարող է խղճնդոտներ յարուցանել կրօնի հոգաւարութեան դէմ, բայց չնայելով որեւէ պատահարների՝ եկեղեցին միշտ կրկնապարէ էր հոգաւարութեան պարտականութիւնը: Հումանիտար փիլիսոփայութիւնը մէն-մենակ չէ կարող ապահովել երկարատև և իրական առաջադիմութիւն, և ամեն մի փորձ՝ զրկելու քաղաքակրթութիւնը բրիտանոնէութեան կենսատու հոգուց՝ ի գոյր կանցնի:

ՄԱՐԻԻԿ: Լուրեր տարածված լինելով կարելիսների աղիտացայի մասին՝ ժամդարմների խումբը դուրս եկաւ Յուսարպուրից՝ որպէս զի գրաւէ Անտոգուրիտ սարը:

ՊԱՐԻՋ: «Figaro» լրագրում տպված է Գոնդա գեներալի ցուցումը: Գոնդա կարծիք է յայտնում, թէ միայն Իրէյֆուր կարող էր հաղորդել այն ղեկավարները, որոնք յիշված են բօրբօրի մէջ: Միևնոյն ժամանակ նա հրաժարվում է բացատրութիւն տալ՝ դադարն dossier-ն ղեկավարական դատարանին ներկայացնելու մասին: Վկան կարծում է, թէ վճռալինջ դատարանին օգտակար կը լինէր ծանօթանալ Պանի-

ցարդիի հեռագրի հետ և յայտնում է, թէ իրան ամենին ծանօթ չէին Եստիպարի յարաբերութիւնները գլխաւոր շտաբի հետ: «Eclair» լրագրում տպված է Դէլուս գեներալի յայտարարութիւնը, որ հերքում է Հարամանի ցուցումները:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ Մարտի 30-ին

Մուրհակները ընթացքը	
Երեք ամսով Լոնդոնի վրա 10 ֆունտ	94.05
" " Բեռլինի վրա 100 մարկ	45.85
" " Պարիզի վրա 100 ֆրանկ	37.22 1/2
2 1/2 Լոնդոնի վրա 10 ֆունտ	94.70
" " Բեռլինի վրա 100 մարկ	46.30
" " Պարիզի վրա 100 ֆրանկ	37.52 1/2
Բօրսային գնի փոփոխութիւն	6-7 1/2 %
4 1/2 % պետական բէնտո	100 1/2
4 1/2 % ագն. կալ. բանկի վրա թղթ	99 1/2
4 1/2 % Վիսկոյի, գին. և հոգ. բանկի	99 1/2
5 1/2 % Վիեննայի, տոմս. առաջին ներքին փոխ.	286
5 1/2 % " " երկրորդ " " " "	253
5 1/2 % " " Գերմ. թղթ. ագն. կալ. բանկի	221
5 1/2 % օտար բէնտո	160
5 1/2 % Գերմ. թղթ. փոխ. հոգ. վարկի ընկ.	181
4 1/2 % ներքին երկաթուղ. փոխ. 1890	100 1/2
Եստի. 1892	100 1/2
5 1/2 % Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկ.	100
4 1/2 % Թիֆլիսի կալուած. բանկի	100
6 1/2 % Գու. թղթի կալուած. բանկի	101
5 1/2 %	100
Ալգիրանը Ռուս. առևտր. արդիւն. ընկ.	367
" " Երգ. Նորէլի նաւթ. ընկ.	658
" " Կապիտալ ընկ.	690
" " Բազուայ նաւթ. ընկ.	857

Խմբագիր՝ Ա.Լ.ԳՍԱՆԻԿ ԳԱԼԱՆԹԱՐ Հրատարակչին՝ ԹԱՌՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ Ր Ա Ւ Է Ր Ամսիս 4-ին, առաջիկայ կիրակի օրը, 12 ժամին, ս. պատարագից յետոյ, Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցւոյ բարեպաշտ ծխականները հրաւիրվում են յիշեալ եկեղեցին՝ նոր երէցփոխ ընտրելու: Գործակալ ա. մ. եկ. հ. Տփիւ. 1—2 Զաքարիա քահ. Զարեղեանց

Թիֆլիսի վաճառականների աւագը եւ նրա ընկերները սրանով յայտնում են ի գիտութիւն 1 և 2 կարգի պ.պ. վաճառականներին, թէ որովհետեւ մարտի 21-ին նշանակված ընդհանուր ժողովը, 1897 և 1898 թվերի ելքի և մուտքի հաշիւները ըննելու և վաճառականների մի աւագ և նրա օգնականներ ընտրելու համար, չը կայացաւ՝ բաւական վաճառականներ ներկայ չը գտնվելու պատճառով՝ ռուսի նշանակելով ապրիլի 4-ին, կիրակի օր, նոր ընդհանուր ժողով լինելու են պ.պ. վաճառականներին շնորհ բերել նշանակած օրը առաւօտեան ժամը 11 1/2-ին քաղաքային դռմայի դահլիճը վերոյիշեալ նպատակի համար: Յայտարարվում է, որ ժողովը կը կայանայ՝ օրբան էլ վաճառականներ ներկայ լինեն: 1—3

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

յայտնում է ընկերութեան Պ.Պ. անդամներին, որ ապրիլի 1-ին, հինգշաբթի օրը, երեկոյեան ժամը 7-ին, Թիֆլիսի դռմայի դահլիճում կը կայանայ ընկերութեան կենտրոնական ընդհանուր ժողովը, քննելու ընկերութեան համար Թիֆլիսի պ. նահանգապետի առաջարկած կանոնադրութեան նոր ծրագիրը, որը կարող են ստանալ պ.պ. անդամները խորհրդիս գրասենեակից՝ Անկիւն Միջին փողոցի և Նրեանեան հրապարակի նախկին տ. Գեներալ Տէր Ասատուրովից: 5—5

ԲԱՐՈՒԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

յայտնում է ընկերութեան բոլոր անդամներին, որ ապրիլի 3-ին, շաբաթ օր, երեկոյեան 8 ժամին, ընկերութեան գրադարանի դահլիճում կը կայանայ ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողով՝ լսելու Բագուի պ. նահանգապետից ստացված կանոնադրութեան նոր նախագիծը ընկերութեան համար: 3—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից:

Ն. հակաւաւոր Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սաւսոն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 31 մարտի (12 ապրիլի), ՄԻՆԻՐԷԼԻ չորեքշաբթի, նաւագետ ՇԷԼՏ: Ն. այսպէս յարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ: Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գինով:

Այսպէս ընկերի և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:

ԲԱՌՈՒՄԻՄ—պ. Վիկտոր դ'Արնօն, Նաբէլ-ժուպա: ԹիֆլիսԻՄԻՄ—պ. Օ. Գ. Բարեկենդիւնեանին, Սիօնի փող. Խօջափարութեով և Մայսուրաճէ քաղաքաւար: ԲԱՌՈՒՄ—պ. Ս. Դիլորաբանին: Կօլուքիակիւնայայ հրապարակ: ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Միխիւր Հերչեմորդերին: (հ. հ. չ.)

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ կար ու ձեռի զարդուած ապրիլի 4-ին, 5-ին և 6-ին տեղի կունենայ աշակերտուհեաց ձեռագործների վաճառումը առաւօտեան ժամը 10—3-ը և երեկոյեան ժամը 5—7-ը: Գանձակայա № 25: (հ. չ. հ.) 1—5

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Սրաւորում է ընկերութեան անդամներին ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ, ապրիլի 4-ին, առաւօտեան ժամը 12-ին, Կար ու ձեռի զարդը, Գանձակայա № 25, ըննելու պ. նահանգապետի առաջարկած նոր կանոնադրութեան նախագիծը: (հ. չ.) 1—2

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ խորհուրդը յայտնում է ընկերութեան պ.պ. անդամներին, որ ապրիլի 3-ին, ս. Գրիգոր Լուսաւորչի տօնի օրը, Մոնթե եկեղեցւում, պատարագից յետոյ, կը կատարվի հոգեհանգիստ ի յիշատակ հանգուցեալ Դ. Խուրադեանի: (հ. չ. չ.) 1—3

ԲԺԻՇԿ Զ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ

Ընդունում է՝ վեներական, արտական, մեղ-թու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝ Առաւօտեան 9—12 ժամը: Երեկոյեան 5—7 ժամը: Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31: (հ. հ. չ.) 19—100

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՅԻ Վ. Յ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Միջալեւան փողոց, տ. № 93. տղ. ժ. № 506: (հ. հ.) 17—45

Ն Ո Ր Ե Կ ՎՃԱԿ ԲԱՐԱԿԵՆՑԻ

Գինը 70 կոպէկ: Հարցնել Կենտրոնական և Կովկասեան դրա-վաճառանոցներում: (հ. չ.) 10—10